Արշակ Չոպանյան

Կապույտ հնգյակ

Աստղերուն պես, որոնց շնորհն ավելի քաղցր է և սուրբ,
Որովհետև հեռավոր և անամատույց մեր ձեռքին,
Եվ որոնց ջինջ բիբերին ժպիտն աղու, գերանուրբ.
Աննյութ տենչով մը միայն կթրթռացնե մեր հոգին,
Աստղերուն պես, գողտր աղջիկ, մեկուսացի՛ր, հեռացի՛ր,
Թև առ ու վե՛ր բարձրացիր կրքերու թանձր աղբյուսեն.
Թույլ մի՛ տար, որ շրթներուդ դպչի համբույրը զազիր,
Թույլ մի՛ տար, որ ցանկությունք ծոցիդ վարդերը պղծեն:
Փաթթե մարմինդ ու հոգիդ քողերու մեջ սպիտակ.
Շուշա՛ն եղիր, տեսլացի՛ր, թող մեջդ կինն անհետի
Եվ երևան գա հրեշտակն, անբիծ, թեթև, լո՛ւյս համակ.
Եվ սերդ թող սրտիս խորն, ամենեն խորն հաստատվի,
Ինչպես պատկե՛ր Կույսին՝ մատուռին մեջ առանձին,
Որուն մարդիկ ծնրադիր, աղոթքներով կմերձին: